Մրցույթ՝ Շիրակի մարզի «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (շաբաթական 8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (թեստ) և բանավոր՝ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում: (Ձև 1)
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն
4. Ինքնակենսագրություն (Ձև 1)
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնեն նաև զինգրքույկ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնք գ. Պեմզաշեն, 1 փողոց, 2 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել **093-93-34-05** հեռախոսահամարին կամ գրել **pemzashen2015@mail.ru:**